

Աւիննոնի հակաթոռ պապը Կղեմէս է, որ Լեւոնի փրկութեան համար աշխատած էր եւ մեծապէս կը զթար անոր վրայ, լսելով Լեւոնի Աւիննոն մօտենալը՝ հրամայեց թափօր կազմել եւ մեծ հանգէսով ընդունիլ տարաբախտ թաղաւորը: Երկու հազարի մօտ մարդիկ Լեւոնը զիմաւորելով բերին հասուցին մինչեւ պապական պալատը, ուր Կղեմէս է « ընկալաւ զնա աւագաշուք հանդիսիւ եւ սիրով մտերմութեան »: Նոյն օրը պապը զրամական կարեւոր նուէր մը տուաւ Լեւոնի, որպէս զի Լեւոն կարենայ Հայաստան զանալ եւ տիրանալ իր երկրին: Պապը՝ այս նուէրէն զատ՝ քրիստոնեայ եւ ազնուական թագաւորներու յատկացուած Ոսկեղէն վարդ պատուանշանով ալ պատուեց Լեւոնը (1 մարտ 1383) (1):

Եր. 472): Նոր պատմիչներն — որոնցէկ նորագոյնն է Felgères, որ քեւտօգնուած է Դարդելի — Rainaldi-ի նեւեւելով մի եւ նոյն կարծիք կը յայտնեն: Բայց սխալ է նոյն եկեղեցական տարեգրին տուած այս տեղեկութիւնը. վասն զի Դարդել (Եր. 187 եւ 188) բացարձակ կերպով կըսէ, թէ Լեւոն դեռ Վենետիկ զտնուած միջոցին մերժեց Ուրբանոսի ներկայացուցիչներուն կողմէ իրեն առաջարկուած ամեն ձեռնտուութիւն, չսխալուելու համար Հռոմի պապն իբրեւ օրինաւոր պապ հանչեալու: *Petit Thalamus* անունով ծանօթ Մոնպելիէի ժամանակագրութիւնն ալ կըսէ (Եր. 406), թէ Լեւոն գերութենէ դարձին նախ Հռոմու եւ յետոյ Աւիննոն գացած է. « Vengut en Rodas e puoys en Avinion »: Ասով կը ներքուի նաեւ Դիւլօրիէի (*Rec. Cr.* Եր. 723) այն սխալ կարծիքը թէ Լեւոն Հռոմու այցելելէ առաջ Նիւսադեմ ուխտի գնաց իր կնոջ՝ « Մարիամ քաղուհիին եւ Փիննա աղջկան հետ » (!), եւ անկէ ալ Կիպրոս անցաւ: Լեւոն չէր կրնար Ուրբանոսի յարիլ անո՛ր համար որ՝ իր զլիսաւոր պաշտպանները — Ֆրանսայի եւ Սպանիայի քաղաւորներն ու Դարդել ֆահանսան — Կղեմէսի կուսակից էին:

(1) Պապին կողմէ Լեւոնի ընծայուած այս պատուանշանին վերաբերեալ արձանագրութիւն մը կայ Աւիննոնի պապական պալատի Արձանագրութեանց Տումարին մէջ (*Regest.* 356, քդ. 151), որ հիմա Վասիկանի դիւանարանը կը գտնուի: Այս արձանագրութիւնն ո՛չ միայն կը նշանակէ *Ոսկեղէն վարդին* Լեւոնի տնուած օրը, այլ եւ *Վարդը* բանօղ արհեստաւորին անունը, գործածուած ոսկիին տեսակն ու կշիռը, ինչպէս նաեւ պապին զանձաւանին կողմէ վճարուած գումարին քանակութիւնը: Ահաւասիկ այս արձանագրութիւնը. « 1383 ք. յունիսի 2. — Այսօր ծախսեալ մէջ արձանագրուեցաւ անցած փետրուարի 26-ին Սիբենացի արծաթիչ վարպէտ Յովհաննէս Բարթոլիին արդէն վճարուած գումարը՝ ոսկեղէն Վարդի (շինութեան) համար գործածուած 1 մարկ, 3 ունկի եւ 18 դենար՝ 20